բացվեցին։ Հողերը նույնպես դուրս են գալիս նրանց իրավունքից։ Մելիքները մնացին սոսկ կալվածատերեր։ Գյուղերում նստեցին համայնքից ընտրված տանուտերներ՝ քեխվանէր։ Երբ նախկին մելիքներից մի քանիսին առաջարկեցին պաշտոնները շարունակել որպես համայնքից ընտրված տանուտերներ, նրանք դա իրենց համար անպատվություն համարեցին և հրաժարվեցին[5]։

Ավելի ուշ, արդեն XIX դ. երկրորդ կեսում, Մեղրին էլ ենթարկվեց Գորիսում նստող գավառապետին և Զանգեզուր անունը տարածվեց նրա վրա էլ։ Այսպիսով նախկին չորս գավառները՝ Բուն Զանգեզուրը, Սիսիանը, Կապանն ու Մեղրին կազմեցին Գանձակի նահանգի միացյալ ընդարձակ գավառ (Зангезурский уезд Елисаветпольской губернии)։

Այս դրությունը տևեց մինչև Անդրկովկասի բաժանվելը առանձին հանրապետությունների, որոնց միջև բռնկեցին արյունալի ընդհարումներ սահմանագծերի որոշման համար ծագած վեճերի հետևանքով։ Այս աղգամիջյան վեճերին վերջ տվեց սովետական իշխանության հաստատումը, երբ ցարական ժամանակի ընդարձակ առումով Զանգեզուր կոչվող գավառը բաժանվեց երկու մասի—արևմտյան կեսը միացվեց Հայկական ՍՍՀ հանրապետությանը և պահպանեց Զանգեզուրի գավառ անունը, իսկ արևելյանը՝ Ադրբեջանական հանրապետության հետ։ Սակայն այժմ էլ, երբ գավառը բաժանված է երեք վարչական շրջանների, Զանգեզուր անունը հասարակորեն վերապահված է հայկական կեսին, ցարական Զանգեզուրի արևմտյան հատվածին, որի սահմանները չեն գծվում այն որոշակի լեռնագրական բնական ուղղություններով, ինչ որ ցարական գավառը ուներ, երբ Զանգեզուրը ընդգրկում էր Զանգեզուր-Կոնգուր-Ալանգյազի և Ղարաբաղի լեռնաշղթաների ու Արաքսի տաշտի միջև գտնվող ամբողջ տարածությունը, մի գրեթե հավասարակող եռանկյունի, որի հիմքն է Արաքսը իր փորած տաշտով, իսկ գագաթը՝ Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի վրա նստած Զիլգյազ—2 327 մ և Ալակայա—2 340 մ լեռնագագաթները։ Այս եռանկյունու մեջ սահմանը երկու հանրապետությունների միջև մինչև այսօր էլ մնում է աննշան ուղղումներով անփոփոխ՝ հատելով նրան հյուսիսից հարավ գրեթե երկրաչափական բարձրության գծով։ Սահմանագիծն սկսվում է Զանգեզուրի շղթայի՝ Սառցալի (Սառչալի) գագաթից—3 597մ, անցնում է Աղջկային կամ Ծղուկ (Ղըզըլ-Բողազ)—3 594 մ և Մեծ Իշխանասար (Մեծ Իշիխլի) Սուրբ Օհաննես—3 467 մ հրաբուխներով, կիսում է Սև լիճ (Կարագյոլ) գեղատեսիլ լեռնային լիճը և հասնում է այնտեղ, որտեղ Աղավնո, այժմ՝ Աղ-Օղլան գետին միանում է նրա օժանդակ Ջաբուխչայ գետը։ Այստեղից սահմանը մի փոքր տարածություն ընթանում է Հագարու գետի հոսանքով և ապա թեքվելով դեպի աջ՝ դիմում է հարավ, հատում է Որոտան (Բազարչայ) գետին։ Այստեղ Որոտան գետը Խոտ գյուղից մի փոքր արևելք է և կոչվում է Բարգուշատ, սահմանը ուղղվում է Հագարու գետին գրեթե զուգահեռ մինչև Արաքս, թողնելով Ողջի (Օխչի) և Ծավ (Բասուտ) գետերի վերին հովիտները Հայաստանի, իսկ ստորին հովիտները, նաև Զանգելանի ստորադիր հովիտը, Ադրբեջանի սահմանների մեջ։ Արաքսի ափին միջհանրապետական սահմանը վերջանում է այն հրվանդանի վրա, որտեղ գետը մի կոր գիծ է քաշում Շահթախտ գագաթի տակով։

---

[4] Գորիսի մելիք Հարությունը. Հուսեյնյանների տոհմից։

[5] Լալայեան Ե., Զանգեզուր, Թիֆլիս, 1899, էջ 11։